ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 3

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի գիտական

խորհրդի 2018թ. նոյեմբերի 30-ի նիստի

Ներկա էին գիտական խորհրդի 68 անդամներից 53-ը:

ՕՐԱԿԱՐԳ

1. Ուսումնական գործընթացի կազմակերպման վիճակը և խնդիրները Ագրոնոմիական ֆակուլտետի ամբիոններում:

Զեկուցողներ՝ ամբիոնների վարիչներ Ա.Մելիքյան,

Ա.Տեր-Գրիգորյան, Հ.Խուրշուդյան,

Ռ.Մանուկյան, Մ.Բաղալյան:

2. Ընթացիկ հարցեր:

Գիտական խորհրդի նիստի առաջին մասը նվիրված էր Հայաստանի ազգային ագրարարյին համալսարանի մի խումբ աշխատակիցներին և ուսանողներին Հայաստանի ազգային ագրարարյին համալսարանի «Պատվոգրով» պարգևատրմանը

/հրամանները կցվում են/:

Լսեցին՝ Բուսաբուծության և բանջարաբուծության ամբիոնի վարիչ գյուղատնտեսական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա.Մելիքյանին, որը ներկայացրեց ուսումնական գործընթացի կազմակերպման վիճակը և խնդիրները Բուսաբուծության և բանջարաբուծության ամբիոնում /կցվում է/:

Նա նշեց, որ ամբիոնում դասավանդվում է առարկաների մեծ քանակ, որոնք պահանջում են համապատասխան առարկայական ծրագրեր, մեթոդական ցուցումներ, որոշակի ուսումնական գրականություն և այլն: Հետևաբար, ապագայում դրանք պետք է անպայման ընդհանրացվեն և օպտիմալացվեն, քանի որ պարունակում են նույն նյութը: նշվեց որ առաջին կիսամյակում դասավանդվող բոլոր դասախոսությունները և լաբորատոր-գործնական աշխատանքները ամբողջովին ներդրվել են

ՀԱԱՀ-ի կայքում, սակայն օգտվողները բավականին սակավաթիվ են: Որպես փորձարկում 3 առարկաների միջանկյալ քննությունները կազմակերպել են թեստային տարբերակով: Սակայն շեշտադրվեց այն փաստը, որ լաբորատոր-գործնական պարապմունքները, ուսումնական և արտադրական պրակտիկաները անցկացվում են ոչ պատշաճ մակարդակով: Ուսումնական գործընթացը առավել կառավարելի և արդյունավետ կազմակերպելու նպատակով, առաջարկվեց ճշտել մասնագիտությունների ցանկը և անվանումները, ուսումնական պլանները ոչ թե վերանայել, այլ կազմել նոր պլաններ, ընդունելությունը կազմակերպել մեկ միասնական մասնագիտությամբ և այլն:

Այգեպտղաբուծության և բույսերի պաշտպանության ամբիոնի վարիչ գյուղատնտեսական գիտությունների թեկնածու, դոցենտ Ա.Տեր-Գրիգորյանը, անտառագիտության և ագրոէկոլոգիայի ամբիոնի վարիչ, կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Հ.Խուրշուդյանը, ընդհանուր երկրագործության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ռ.Մանուկյանը և ընդհանուր կենսաբանության ամբիոնի վարիչ գյուղատնտեսական գիտությունների թեկնածու, դոցենտ Մ.Բաղալյանը ներկայացրեցին համապատասխանորեն իրենց ամբիոններում ուսումնական գործընթացի կազմակերպման վիճակը և խնդիրները /զեկույցները կցվում են/: Զեկուցողները նշեցին, որ ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման և իրականացման համար ուշադրության կենտրոնում են պահվում ուսումնական և աշխատանքային կարգապահության հարցերը, դասալսումների, բազմագործոնային համակարգով գնահատման արդյունքները և այլն:

Արտահայտվեցին՝ Ռ.Մանուկյանը, Ա.Հովհաննիսյանը, Ա.Խաչատրյանը, Ա.Հակոբյանը:

Ռեկտոր Վ.Ուռուտյանը ամփոփելով քննարկվող հարցը, նշեց՝ որպեսզի մասնագիտական կրթական ծրագրերը, ամբիոնների կարողությունները համապատասխանեն նոր զարգացումներին և բավարարեն աշխատաշուկայի պահանջարկին, անհրաժեշտ է արդիականացնել, վերանայել և վերազիննել կրթական ծրագրերը: Նշեց, որ ընդհանուր

առմամբ խնդիրները բոլոր ամբիոններում գրեթե նույն բնույթի են և անդրադարձ կատարվեց այն հարցերին, որոնք առաջիկայում նախատեսվում են ուսումնական գործընթացում: Մասնավորապես՝ դասավանդվող կրկնվող առարկաների խոշորացում, 4 տարվա բակալավրային ուսուցում, նոր պահանջվող արդիական առարկաների և ուսանողների մեկ աշխատանքային կիսամյակի ներդրում: Նախատեսվում է զարգացնել էկոլոգիական կրթությունը, թեթևացնել դասախոսների ծանրաբեռնվածությունը և անցում կատարել 50 րոպե տեվողությամբ դասաժամերի:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն:

Լսեցին՝ Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ռ.Մակարյանին, որը ներկայացրեց գիտական խորհրդի հաստատմանը «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի մագիստրատուրայի ընդունելության կարգը շարադրված նոր խմբագրությամբ:

Առաջարկվեց 2016թ. հունվարի 18-ի N13 արձանագրությամբ հաստատված Հայաստանի ազգային ագրարային համալսարանի մագիստրատուրայի ընդունելության կարգի 5-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ: Տեղեկացրեց, որ համալսարանի մագիստրատուրայի ընդունելության 5-րդ կետը սահմանափակում է ուսանողների մագիստրատուրա ընդունվելու իրավունքը ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի համապատասխանության մասով (60% առարկայական տարբերության մասով):

Հաշվի առնելով բուհի ներկայիս որդեգրած քաղաքականությունը և միջազգային փորձը և ամփոփելով վերը նշվածը, առաջարկվեց 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

5. Մագիստրոսի աստիճան ունեցող քաղաքացիները 2-րդ մագիստրոսական կրթություն կարող են ստանալ միայն վճարովի հիմունքներով:

5.1 Օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք մագիստրատուրա կարող են ընդունվել միջպետական և միջգերա-

տեսչական պայմանագրերի կամ համաձայնագրերի հիման վրա, լրացուցիչ տեղերի հաշվին, ինչպես նաև վճարովի հիմունքներով սեփական նախաձեռնությամբ:

Որոշեցին՝ Հաստատել Հայաստանի ազգային ագրարային համալսարանի մագիստրատուրայի ընդունելության կարգի 5-րդ կետը հետևյալ խմբագրությամբ՝

5.Մագիստրոսի աստիճան ունեցող քաղաքացիները 2-րդ մագիստրոսական կրթություն կարող են ստանալ միայն վճարովի հիմունքներով:

5.1 Օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք մագիստրատուրա կարող են ընդունվել միջպետական և միջգերատեսչական պայմանագրերի կամ համաձայնագրերի հիման վրա, լրացուցիչ տեղերի հաշվին, ինչպես նաև վճարովի հիմունքներով սեփական նախաձեռնությամբ:

Լսեցին՝ Ֆինանսների և վարկի ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ Աննա Արտաշեսի Ալեքսանյանի թեկնածուական ատենախոսության թեմայի մասնակի փոփոխության և գիտական ղեկավարի փոփոխման հարցը:

Որոշեցին՝ Ֆինանսների և վարկի ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ Աննա Արտաշեսի Ալեքսանյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Հայաստանի Հանրապետության առևտրային բանկի ակտիվների և պասիվների կառուցվածքի և ֆինանսական կայունության փոխազդեցության գնահատումը» վերնագրով, Ը.00.03 «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ:

Գիտական ղեկավար հաստատել տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Ա.Սալնազարյանին:

Լսեցին՝ Ֆինանսների և վարկի ամբիոնի առկա ուսուցման ասպիրանտ Զարմիկ Վահանի Մելիքյանի թեկնածուական ատենախոսության թեմայի մասնակի փոփոխության և գիտական ղեկավարի փոփոխման հարցը:

Որոշեցին՝ 1. Զարմիկ Վահանի Մելիքյանի հաստատել ԱՊՀ էկոնոմիկայի ամբիոնի առկա ուսուցման ասպիրանտ Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասմագիտությամբ:

2. Թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Ներդրումային միջավայրի բարելավման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետության սննդարդյունաբերության ոլորտում» վերնագրով:

3. Գիտական ղեկավար հաստատել տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Է.Ղազարյանին:

Գիտխորհրդի նախագահի
պաշտոնակատար Վ.Ուռուտյան

Գիտքարտուղար Դ.Ս.Բալասանյան